ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» սեպտեմբերի 2019 թվական N 784-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ «2019» ԹՎԱԳՐՄԱՄԲ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԸ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ակցիզային հարկի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. 2019 թվականի սեպտեմբերի 20-ից կիրառության մեջ դնել Արցախի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ալկոհոլային խմիչքի դրոշմավորման համար «2019» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**